Բուժօգնություն սահմանին

Նպատակը

Ծրագրի նպատակն է անհրաժեշտ գույքով և բժշկական սարքավորումներով ապահովել Սյունիքի մարզի սահմանամերձ Խնձորեսկ համայքի ԱԱՊ հաստատությունը, որի շնորհիվ համայնքի բնակիչները կկարողանան ստանալ անհրաժեշտ նախնական բուժօգնությունը՝ բարելավելով իրենց առողջությունն ու կյանքի որակը:

Նկարագրություն

Աշխարհագրական դիրքով պայմանավորված այսօր Սյունիքի մարզի Խնձորեսկ համայքը ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Համայնքում բնակվող ավելի քան 2000 բնակիչներ ապրում և գործունեություն են ծավալում այդ համայնքում:

Սակայն, ցավոք սրտի, համայքնում գործող Խնձորեսկի ԱԱՊԿ-ն զինված չի անհրաժեշտ գույքով և բժշկական սարքավորումներով, ինչը ստեղծում է որոշակի խոչընդոտներ առողջապահական ծառայությունների բավարար մատուցման համար: Բացի դա, անբարենպաստ եղանակային պայմաններում ճանապարհները գրեթե անանցանելի են դառնում և բնակիչներին շատ դժվար է անհրաժեշտ նախնական հետազոտությունների համար հասնել ավելի խոշոր համայքներում գործող բժշկական կենտրոններ: Սակայն նախնական հետազոտություններն ու կանոնավոր այցերը կարևոր նշանակություն ունեն առողջական խնդիրների վաղ հայտնաբերման և կանխարգելման համար:

Բարձրորակ բժշկական սարքավորումներն ու գույքը զգալիորեն կբարելավեն իրավիճակը՝ դարձնելով բուժհաստատության գործունեությունն ավելի նպատակային և հնարավորություն տալով բնակիչներին ավելի արդյունավետ պլանավորել իրենց ժամանակը՝ ստանալով անհրաժեշտ հետազոտությունները տեղում: Կանոնավոր այցելությունները թույլ կտան արդյունավետորեն իրազեկել բնակչությանը, վաղաժամ հայտնաբերել հիվանդությունները, կանխարգելել դրանք, ինչպես նաև կառավարել քրոնիկ հիվանդությունները: Սա, իր հերթին, կօգնի նվազեցնել հիվանդների քանակն ու հանկարծակի մահացությունների թիվը համայնքում:

Բյուջե

Անվանում	Քանակ	Արժեք/հատ	Արժեք
Բժշկական զննման թախտ	3	80,000	240,000
Էլ. տաքացուցիչ	2	12,000	24,000
Սպասասրահի նստարան	1	130,000	130,000
Մանկական կշեռք հասակաչափով	1	80,000	80,000
Շտատիվ	1	25,000	25,000
ԷՍԳ-ի ապարատ 6 արտածում	1	350,000	350,000
Ստերիլիզատոր	1	350,000	350,000
Շիրմա	1	60,000	60,000
Գրասեղան	2	80,000	160,000
Աթոռ	4	17,000	68,000
Պահարան դեղորայքի	1	150,000	150,000
Քարտապահարան	1	95,000	90,000
Մանկական բարուրասեղան	1	80,000	80,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *383* ՀՀ դրամ

֏1,807,000